



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

11 ապրիլի 2019թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝

Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝

Ա. Պետրոսյանի

Ա. Թունյանի

Քննության առնելով «ԱյԴԻ Բանկ» ՓԲԸ-ի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «ԱյԴԻ Բանկ» ՓԲԸ-ն 2019 թվականի մարտի 25-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով. «Որոշել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի

գ) կետի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

2. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը հակասում է Սահմանադրությանը, «մասնավորապես՝ 63-րդ հոդվածի 1-ին մասին և 61-րդ հոդվածի 1-ին մասին այնքանով, որքանով պետական տուրքի գծով արտոնություն նախատեսելիս հաշվի է առնում միայն արտոնություն հայցող կողմի գույքային դրույթունը և հաշվի չի առնում այն կողմի գույքային դրույթունը, որի վրա կարող է դրվել պետական տուրքի հատուցման պարտականությունը՝ արդյունքում սահմանափակելով արդարադատության հասանելիությունն ու մատչելիությունը»:

Դիմողի պնդմամբ՝ վիճարկվող դրույթում առկա է սահմանադրականության հարց (իրավակիրառական պրակտիկայի լույսի ներքո), այլ ոչ թե դրույթի կիրառման իրավաչափության հարց՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշման իմաստով, քանի որ դատարանների կիրառման պրակտիկայում այն կրում է համատարած բնույթ:

Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները՝ դիմողը նշում է, որ թեև պետական տուրքեր վճարելու պարտականությունն ինքնին չի կարող դիտարկվել որպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, սակայն «նախատեսված պետական տուրքի չափը կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո...., ինչպես նաև վարույթի փուլը, որի ժամանակ նախատեսվում է սահմանափակումը, հանգամանքներ են, որոնք էական են որոշելու համար, թե արդյոք անձն ունեցել է դատարանի մատչելիության իրավունք, թե ոչ»:

3. Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ դիմողը բաց է թողել Սահմանադրական դատարան դիմելու համար «Սահմանադրական դատարանի

մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված 6-ամսյա ժամկետը:

Այսպես, Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության, ինչպես նաև լուծման առանձնահատկություններից:

Գործի դատավարական նախապատմությունը ցույց է տալիս, որ Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը կայացվել է 2018 թվականի սեպտեմբերի 5-ին: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին Վճռաբեկ դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Վճռաբեկ դատարանի նշյալ ակտը կայացվել է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքն ուժի մեջ մտնելուց հետո: Հետևաբար՝ դիմողի համար Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված ժամկետի հաշվարկը պետք է կատարվի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի տրամաբանության շրջանակներում, ըստ որի՝ անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 6 ամիս հետո: Այսինքն՝ խնդրո առարկա գործի շրջանակներում դիմողի համար Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված ժամկետն ավարտվել է 2019 թվականի մարտի 6-ին, մինչդեռ դիմողի դիմումը Սահմանադրական դատարանում մուտքագրվել է 2019 թվականի մարտի 25-ին: Հետևաբար, դիմողը բաց է թողել Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված ժամկետը:

Ելնելով վերոնշյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«Այդի Բանկ» ՓԲԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝
Անդամներ՝



11 ապրիլի 2019 թվականի
ՍԴԴԿՈ-18